ՀՀ Արագածոտնի մարզ
ՕՐԳՈՎ

Համայնքի ինգամյա զարգացման ծրագիր

Օրգով 2017

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք 3

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 4

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն 4

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը ..... **Ошибка! Закладка не определена.**

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը 6

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները **Ошибка! Закладка не определена.**

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ 8

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն 7

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում 9

3.1. Համայնքի զարգացման տեսլական 9

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ 12

4. ՀՀԶԾ ֆինանսավորում ..... **Ошибка! Закладка не определена.**

5. ՀՀԶԾ մոնիթորինգ ..... **Ошибка! Закладка не определена.**

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի ընթերցող՝ Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արագածոտն մարզի Օրգով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, որը մշակվել է հիմք ընդունելով << Տեղական ինքնակառավարման մասին >>ՀՀ օրենքով սահմանված լիազորությունները և իրավասությունները :

ՀՀՁԾ մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել համայնքի ֆինասնական կարողությունը,համայնքում առկա զարգացման դրական միտումները,ինչպես նաև համայնքում առկա խնդիրները և վտանգները:

Մեր նպատակն է համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման կենտրոն, համայնքում զարգացնել անասնապահությունը՝ տարեցտարի ավելացնելով անասնագլխաքանակը ,կաթի և մսի քանակի և որակի բարձրացումը ,զարգացնել այգեգործությունը և պտղաբուծությունը՝ ստեղծելով նախադրյալներ ավելի մեծ թվով շահառուների ընդգրկել նշված ոլորտներում::

Հիմնական խնդիրներից կարելի է նշել նաև արտադրված ապրանքի սպառման խնդիրը, որը կապված է համայնքը մայրուղուց հեռու գտնվելու և պահանջարկի բացակայությամբ :

Համայնքի զարգացման համար խոչընդոտ է նաև համայնքի ոչ գազաֆիկացված լինելը՝ իր հետ բերելով նոր խնդիրներ:

Վերը նշված խնդիրների արդյունքում խոչընդոտներ են առաջանում համայնքի սոցիալ – տնտեսական վիճակի բարելավմանը, բնակչության բնական աճի, մշակույթային կյանքի զարգացման հարցերում:

Հաշվի առնելով այն փաստը , որ համայնքը փոքր է իր բնակչությամբ և ֆինանսական կարողություններով ,որի արդյունքում համայնքը իր միջոցներով ի վիճակի չէ իրականացնել իրեն վերապահված լիազորությունները ամբողջ ծավալով, որի պատճառով համայնքի զարգացման նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է համախմբվածություն, հետևողականություն, ֆինանսական և ռեսուրսային միջոցների ճիշտ և արդյունավետ օգտագործում՝ ինչն էլ կհանգեցնի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական և մշակութային պայմանների բարելավվմանը :

Համյնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հատուկ ուշադրություն է դարձվել ,որպեսզի այն համահունչ լինի ՀՀ ռազմավարական , մարզային և տարածաշրջանային գործողության մեջ դրված զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ կառավարման մարմինների ,քաղաքացիական հասարակության և առանձին կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնումով՝ ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցությամբ , դրանց լուծումներին հասնելու համար:

Օրգով համայնքի ղեկավար Ա.Մանուկյան

2,Համայնքի իրավիճակի նկարագրություն

2,1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Օրգով համայնքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 18 կմ հյուսիս-արևմուտք, բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է ՝ 1630 մ և վարչական տարածքը կազմում է 3767,79 հա:

Գյուղից արևմուտք պահպանվել են կիկլոպյան ամրոցի՝ մ.թ.ա. II-I հազարամյակ և կից բնակավայրի մնացորդներ: Գյուղը տեղադրված է Արագած լեռնազանգվածի հարավ-արևելյան փեշերին, Ամբերդ գետի հովտում:Քիչ հարավ-արևելք գտնվում է Խաչավանք կոչվող սարահարթը

Ըստ Հայաստանի Հանրապետության 2009 թվականի մարդահամարի Օրգովում մշտական բնակչությունը 550, իսկ 2016թ հունվարի 1-ի դրությամբ առկա բնակչությունը կազմում է 518 մարդ:

Բնակչութունը ըստ սեռա-տարիքային կազմի՝

- Մինչև 6 տարեկան ..... 12 մարդ.՝ որից 4 իգական. 8 արական
- 7-ից միչև 18 տարեկան.....64 մարդ՝ որից 30 իգական. 34 արական
- 19-ից միչև 63 տարեկան.....388 մարդ՝ որից 135 իգական. 173արական
- 63 և ավելի տարիքի.....54 մարդ՝ որից25 իգական. 29 արական



Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ :

Համայնքն չունի մանկապարտեզ, մշակույթի տուն, ունի միջնակարգ դպրոց ՝ որում սովորում են 38 աշակերտ:Դպրոցի աշխատակազմը 24 աշխատակից՝ այդ թվում 16 մանկավարժ:

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- *Օրգով համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 14450.0հազ դրամ: Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտներ կազմում են 5538,4 հազ դրամ, կամ ընդհանուր տարեկան եկամուտների 38.3 %*
- *Համայնքի տարածքում արդյունաբերական ձեռնարկությունները չկան:*
- *Համայնքում գրացված և գործում են թվով երկու տնտեսվարող սյուբեկտներ , որոնք իրականացնում են առևտրային գործունեություն՝ հիմնական առաջին սպառման առարկաների վաճառք: ,*
- *համայնքի բնակիչները հիմնական զբաղվում են անասնապահությամբ:*

- *Համայնքումից* արևմուտք պահպանվել են կիկլոպյան ամրոցի՝ մ.թ.ա. II-I հազարամյակ և կից բնակավայրի մնացորդներ:՝
-
- *Համայնքում առողջապահական հիմնարկ չկա և համայնքը առողջապահական ծառայություն ստանում է հարևան Բյուրական համայնքի բուժ. ամբուլատորիայից :*
- *ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքների թիվը 2016թ-ի համար կազմել է 6 ընտանիք,*
- *գործազրկության մակարդակ համայնքում կազմում է շուրջ 50%:*

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

- *համայնք -պետություն համագործակցության շրջանակներում ՀՀ ԳՆ կից ԾԻԳ-ի կողմից համայնքում իրականացվել է ջրարբիացում և մեկ MTZ 82.1 անիվավոր տրակտորի ձեռքբերում, իսկ գալիք հինգ տարիների համար նախատեսվում է նաև նոր գյուղ. տեխնիկայի ձեռքբերման ծրագրեր և գյուղատնտեսական տարբեր միջոցառումներ:*
- *հարևան համայնքների հետ համատեղ իրականացվում են միջհամայնքային ճանապարհների մաքրման ,պահպանման և բարելավման ընդհանուր աշխատանքներ:*
- *միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններից համագործակցության շրջանակներում համայնքը ակընկալում է համայնքի գազաֆիկացում,մանկապարտեզի և մշակույթի տան շենքերի կառուցում և ներհամայնքային ճանապարհների բարելավում:Նշված հարցերի կարգավորման հետ միասին կբարձրանա և համայնքի սոցիալական վիճակը և դրական փոփոխություն կլինի մշակութային կյանքում:*
- *տեղացի բարերարների կողմից իրականացվել է գյուղի սրբատեղի կառուցման ,ինչը կամրապնդի հավատքի և համայնքի միասնության ամբողջականությունը:*

Պետության հետ համագործակցության շրջանակներում՝ ՀՀ ԳՆ կից ԾԻԳ-ի կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվող գյուղ. տեխնիկայի ձեռքբերման ծրագրերը էականորեն դրական ազդեցություն կարող են ունենալ հողատարածքների արդյունավետ մշակման , որն էլ կարող է բերել անասնագլխաքանակի և գյուղմթերքների արտադրանքի ավելացմանը:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

համայնքի բյուջեն (եկամտային և ծախսային մասերով),

Օրգով համայնքի կողմից 2017-2021թթ-ի համար նախատեսվել է եկամուտների հետևյալ բյուջետային կառուցվածքը:

Անվանումը	2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ
Հողի հարկ	535,9	550,0	570,0	600,0	620,0
Գույքահարկ	3574,7	4000,0	4200,0	4500,0	4800,0
Տեղ, փուքեր և վճ,	36,0	40,0	60,0	80,0	100,0
Գույքի վարձավճ,	3600,0	3850,0	4000,0	4000,0	4500,0
Համահարթ, դոտ,	6734,1	7500,0	7500,0	7800,0	8000,0
Այլ դոտացիա	---	-----	200,0	----	----
Այլ եկամուտներ	600,0	1000,0	1200,0	2600,0	5000,0
Ազատ մնացորդ	2600,0				
Ընդամենը	15080,7	16940,0	17730,0	19580,0	23020,0

Օրգով համայնքի կողմից 2017-2021թթ-ի համար նախատեսվել է հետևյալ բյուջետային ծախսային ուղղությունները:

Անվանումը	2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ
Ապա,պահպ, ծախսեր	13279,2	13800,0	14000,0	14000,0	14000,0
Աղբահանություն	0	200,0	200,0	200,0	200,0

Մանկապարտեզ, մշակույթի տան կառ.	0,0	0,0	0,0	2000,0	2000,0
Կոմունալ ծառայություն	200,0	200,0	200,0	200,0	200,0
Մշակույթ	280,0	300,0	500,0	500,0	600,0
գազաֆիկացում	0,0	2200,0	2030,0	1880,0	5000,0
Սոց ապահովություն	600,0	700,0	800,0	800,0	800,0
Փողոցների լուսավորություն	1000,0	0	0	0	0
Ջրագիծ	1000,0	0	0	0	0
Ասֆալտապատում	1000,0	0	0	0	0
Այլ ծախսեր	321,5	0	0	0	220,0
Ընդամենը	17680,5	16940,0	17753,0	19580,0	23020,0

2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

- ***Համայնքի ուժեղ կողմեր՝***
  1. Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման, գեղատեսիլ բնությունը
  2. Բնակավայրին հարակից անտառամերձ գոտու առկայությունը
  3. Համայնքի միջնակարգ դպրոցի առկայություն
  4. Աշխատուժի առկայություն
  5. Հողերի բերրիություն
  6. Անասնապահության զարգացման հնարավորություն՝
  7. Մեղվաբուծության զարգացման հնարավորություն
  8. Համայնքում հեռուստատեսության առկայություն
  9. Համայնքի բնակիչների համախմբվածությունը
  10. Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայություն
- ***Համայնքի թույլ կողմեր՝***
  1. Համայնքի ոչ գազաֆիկացված լինելը
  2. Մշակույթի տան, մանկապարտեզի բացակայություն
  3. Համայնքի արտաքին << գիշերային>> լուսավորության համակարգի բացակայություն
  4. Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակ
  5. Մայրուղուց հեռու գտնվելը
  6. Ջրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգի բացակայություն
  7. Գյուղատնտեսական տեխնիկայի պակաս
  8. Սպորտի և ժամանցային կենտրոնների բացակայությունը
  9. Գյուղատնտեսական հողերի մշակման ոչ բավարար վիճակը
  10. Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը
- ***Հնարավորություններ՝***
  1. Գյուղատնտեսական մթերքների արտադրանք
  2. Կաթի վերամշակման արտադրամաս՝ շենքի հիմնում

3. *Արտադրանքի առկայության դեպքում աշխատուժի բավարար քանակ*
4. *Ջերմոցային համակարգի հիմնում*
5. *Կուլտուրայի տան կառուցում ու շահագործումը մեծապես կնպաստի համայնքի մշակութային կյանքի ակտիվացմանը, երիտասարդների հետ նպատակային աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը, երեխաներին արտադպրոցական դաստիարակության խմբակներում ներգրավմանը*

- ***Սպառնալիքներ*** ՝
  1. *Քամիներ*
  2. *Կարկուտ*
  3. *Յրտահարություններ*
  4. *Տևական երաշտներ*
  5. Ոռոգման ջրի անբավարար քանակությունը վտանգում է համայնքում հողագործությամբ զբաղվելուն,որը նպաստում է գյուղատնտեսության ոչ ինտենսիվ զարգացմանը ինչն էլ նպաստում է երիտասարդների արտագաղթին, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությանը:

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

Օրգովի ՀՀԶԾ նպատակների և գործողությունների, սահմանման, անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկման հերթականությունը



3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն,բարեկարգ ու մաքուր ,բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող: Օրգով համայնքի ՀՀԶԾ-ի իրականացման արդյունքում , առաջիկա հինգ տարների ընթացքում կբարելավվի համայնքի բնակիչների սոցիալ –տնտեսական վիճակը ,բնակչությունը կունենա իր ներդրումը ինչպես համայնքի զարգացման համար,այնպես էլ խթան կհանդիսանա պետության առաջընթացի համար, կբարձրանա բնակչության կուլտուր – կենցաղային պայմանները,արդյունքում բնակչությունը կմասնակցի համայնքի մշակութային կյանքի զարգացմանը ,ինչպես նաև նախատեսված ծրագրերի օգնությամբ բնակիչը ավելի շատ կկապվի հայրենի հողի հետ և կշենացնի հայրենի օջախները :

Ելնելով Օրգով համայնքի աշխարհագրական դիրքից ,հողերի կարգավիճակից կարելի է համայնքի առաջնահերթ զարգացման ուղղությունը համարել գյուղատնտեսությունը՝ տարեցտար ավելացնել անասնագլխաքանակը և բանջար- բոստանային կուլտուրաների արտադրման ծավալները:Միջոցներ ձեռնարկել համայնքում վերականգնել այգեգործությունը և պտղաբուծությունը:

ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով համայնքի զարգացման ծրագիրը կազմված է առաջիկա հինգ տարիների համար և փոփոխություններ սպասվում են այդ տարիների ընթացքում:

Համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

1. Համայնքի բնակչության կենցաղային կարիքների բարելավում, որի հարցում կարևոր նշանակություն ունի գազաֆիկացում, որը կփրկի համայնքի անտառային ֆոնդը ոչնչացումից , որի համար գումարը կազմում է շուրջ 100 մլն դրամ:՝ համայնքը նախատեսել է իր մասնաբաժինը 2018-2021թթ համար 11,11 մլն դրամ: Դեռևս ֆինանսավորման հարցը լուծված չէ:

2. Մատաղ սերնդի դաստիարակության հարցում կարևոր է մանկապարտեզի և մշակույթի տան կառուցումը: Գումարը կազմում է շուրջ 15 մլն դրամ:, որտեղ համայնքի մասնաբաժինը կազմում է 4 մլն դրամ: Դեռևս ֆինանսավորման հարցը լուծված չէ:

3. Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար կարևոր խնդիր է խմելու ջրի ջրագծի և ոռոգման համակարգերի կառուցումը և հների կապիտալ նորոգումը: Այս նպատակով համայնքը նախատեսել է իր մասնաբաժինը՝ 1,0 մլն դրամ: Մնացած գումարի հարցը կանխատեսվում է այլ ծրագրերով: Խնդրի լուծման դեպքում սպասվում է գյուղատնտեսության կայուն զարգացում:

4. Համայնքի զարգացման և կայուն եկամուտների ապահովման գործում կարևոր նշանակություն կունենա զբոսաշրջության զարգացումը,որի համար կան նպաստավոր պայմաններ:

Համայնքի կայուն զարգացման գործում կարևոր խնդիրներ են նաև համայնքի ներհամայնքային ճանապարհների կապիտալ նորոգումը, փողոցների լուսավորության անցկացումը,մշակույթի տան և գյուղապետարանի գույքի ձեռքբերումը:

Համանքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացումը նախատեսում է անհրաժեշտ ռեսուրսները, գործողությունները, ուղղակի արդյունքները, ծրագրի անմիջական և հեռահար նպատակները, որոնց ամբողջությունը ծրագրի տրամաբանական հենքն է.



ա/ համայնքում աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի նվազման - 1 %

բ/ Սեփական եկամուտների տարեկան աճի - 9 %

գ/ Բնակիչների թվի ավելացման - 1 %:

որը կապահովեն համայնքի կայուն զարգացում:

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով համայնքի զարգացման հնգամյա ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր պարտադիր խնդրի լուծման համար համայնքը սահմանել է անմիջական նպատակներ, որոնց իրականացումը կերաշխավորի համայնքի հեռահար նպատակների իրագործումը և համայնքին կբերի կայուն զարգացում:

Համայնքի զարգացման անմիջական նպատակներ են.

1.Համայնքի դրամական միջոցների և գույքի կառավարում .

2. Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում.

3.Ակտիվ մշակույթային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ.

4. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն.

5. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում.

6. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը.

7. Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում.

8. պետության պաշտպանության իրականացման աջակցում.

9. Աղետի ռիսկերի նվազեցում և արտակարգ իրավիճակներում բնակչության ու քաղաքացիական պաշտպանության իրականացում.

10. Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում.

11. Շրջակա միջավայրի պահպանություն.

12. Երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ.

13.Բարեգործության խթանում.

Ծրագրի անմիջական նպատակների չափելիությունն ապահովելու համար սահմանվել է կատարողականի առանցքային ցուցանիշներ և ցուցանիշների թիրախային արժեքներ, որոնք ներկայացված են ՀՀՌԾ ծրագրերի անձնագրերում:

1. Համայնքի գազաֆիկացում.

Համայնքի բնակչության կենցաղային կարիքների բարելավման հարցում կարևոր նշանակություն ունի գազաֆիկացում, որը կփրկի համայնքի անտառային ֆոնդը ոչնչացումից

Այս ծրագրի իրականացման համար նախատեսված է շուրջ 100 մլն դրամ, որից համայնքի ներդրումը 2018-2021թթ. համար բյուջեով նախատեսված է 11,11 մլն դրամ:

2. Մանկապարտեզի և մշակույթի տան կառուցումը.
   Այս ծրագրի իրականացման համար համայնքը նախատեսում է կառուցել նոր մանկապարտեզի և մշակույթի տուն, որը մեծապես կնպաստի համայնքի մշակութային կյանքի ակտիվացմանը, երիտասարդների հետ նպատակային աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը, երեխաներին արտադպրոցական դաստիարակության խմբակներում ներգրավմանը:
   Ծրագրի գինը կազմում է շուրջ 15.0 մլն դրամ: Նախատեսվում է ծրագիրը իրականացնել 2020 – 2021 թթ., իսկ համայնքի բյուջեից ներդրման գումարը կազմում է 4 ,0 մլն դրամ:

3. Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար կարևոր խնդիր է խմելու ջրի ջրագծի և ոռոգման համակարգերի կառուցումը և հների կապիտալ նորոգումը Խնդրի լուծման դեպքում սպասվում է գյուղատնտեսության կայուն զարգացում:
   Նախատեսվում է ծրագիրը իրականացնել 2017թ., իսկ համայնքի բյուջեից ներդրման գումարը կազմում է 1 ,0 մլն դրամ

4. Համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում և կապիտալ նորոգում.

   Ծրագիրը հնարավորություն կտա համայնքում բարելավել տրանսպորտի վիճակը: Ծրագրի իրականացումը նախատեսվում է 2017 – 2018թթ.,: Այդ նպատակով համայնքի բյուջեից հատկացվել է 1 ,0 մլն դրամ:

5.Ներհամայնքային փողոցների լուսավորության անցկացում

Ծրագրի իրականացումը կբարձրացնի բնակչության կենսամակարդակը: Ծրագրի գինը կազմում է 1,0 մլն դրամ, որը կտրամադրվի համայնքի բյուջեից:

4.ՀՀՌԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Փարպի համայնքի ՀՀՌԾ – ում ընդգրկված ծրագրերն նախատեսված է իրականացնել .

1. Համայնքի սեփական միջոցներով.
2. Ներքին պաշտոնական դրամաշնորհներով.
3. Պետություն – համայնք – մասնավոր հատված համագործակցության շրջանակներում մասնավոր ընկերությունների կողմից արված ներդրումներ.
4. Բարեգործություն և նվիրատվություն.
5. Այլ աղբյուրներ.

ՀՀՌԾ – ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար առկա և անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներկայացված են ՀՀՌԾ ծրագրերի ֆինանսավորման ամփոփաթերթում:

Համայնքը իր միջոցներով պատրաստ է իրականացնել հետևյալ ծրագրերը.

1. Ներհամայնքային փողոցների լուսավորության անցկացման համար 2017 – 2018 թթ. Համայնքի վարչական և ֆոնդային բյուջեից նախատսված է 1,0 մլն դրամ: Ելակետային տարվա արժեքն է՝ 1,0 մլն դրամ:

Պետություն – համայնք – մասնավոր հատված համագործակցության շրջանակներում, այլ ծրագրերով համայնքը նախատեսում է իրականացնել.

1. Համայնքի գազաֆիկացում գումարը - 100 մլն դրամ,որից
   համայնքի ֆոնդային բյուջեից – 11,11 մլն դրամ.
   այլ ծրագրերով – 88, 89 դրամ (գումարի հարցը լուծված չէ).

2. մանկապարտեզի և մշակույթի տան կառուցում անհրաժեշտ գումար - 15,0 մլն դրամ

   Համայնքի ֆոնդային բյուջեից – 4,0 մլն դրամ.

   Այլ ծրագրերով – 11,0 մլն դրամ (գումարի հարցը լուծված չէ)

3. խմելու ջրի ջրագծի և ոռոգման համակարգերի կառուցման համար գումարը – 10 մլն դրամ, որից .

   համայնքի ֆոնդային բյուջեից – 1,0 մլն դրամ.

   Այլ ծրագրերով – 9,0 մլն դրամ (գումարի հարցը լուծված չէ)

5. Համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում և կապիտալ նորոգման համար – 30 մլն դրամ, որից

   Համայնքի բյուջեից – 1 մլն դրամ

   Այլ ծրագրերով – 29 մլն դրամ (գումարի հարցը լուծված չէ).

5.ՀՀՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀՀՀԶԾ մոնիթորինգի ծրագիրը, մոնիթորինգի ենթարկվող ցուցանիշները,ցուցանիշների հավաքագրման հաճախականությունը, տեղեկատվության աղբյուրներն ամփոփված է ՀՀՀԶԾ մոնիթորինգի անձնագրում: